ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին
(փոփոխված)

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-17/6Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի նոյեմբերի 9-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-17/6Հ պայմանագրում 2018 թվականի օգոստոսի 2-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 326-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-17/6Հ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 326-Ն որոշման, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի և Պայմանագրի 4.3 և 7.5 կետերի պահանջները՝ պայմանագրի գինը սահմանվել է 973 800 (ինը հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
09.11.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-17/6 Հ պետական գնման պայմանագրի

ք. Երևան <<02>> <<08>> 2018թ.

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Օհանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 326-Ն որոշումը և Կողմերի միջև 2017 թվականի նոյեմբերի 9-ին կնքված **ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների** մատուցման N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-17/6 Հ պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.3 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ծառայության գինը (այսուհետ՝ պայմանագրի ընդհանուր գին) կազմում է 973 800 (ինը հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որից՝ 162 300 (մեկ հարյուր վաթսուներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն>>:

1.2 Պայմանագրի հավելված N 1-ով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի.

1.2.1 ընդհանուր գինը սյունակում նշված <<900 000 (ինը հարյուր հազար)>> բառերը փոխարինել <<973 800 (ինը հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր)>> բառերով.

1.2.2 <<Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը>> բաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 326-Ն որոշմամբ հատկացված գումարի շրջանակներում 2018 թ. հունիսի 18-ին շինարարական աշխատանքների իրականացման համար կնքված Համաձայնագիր N 3-ի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում՝ համաձայն հաստատված նախագծի>>:

1.3 Հաստատել Կատարողի կողմից 2018 թվականի ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների վճարման ժամանակացույցը 562 400 (հինգ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր)՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից, որը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	Կատարող
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3	Ք.Երևան, Փ. Բուզանդի 1/3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	<<Պրոմեթեյ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900011019792	Հ/Հ 1660000215670100
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 02500241
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Ս. Օհանյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
09.11.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-17/6 Հ պայմանագրի
02.08. 2018թ. կնքված համաձայնագիր N 1-ի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 11, խումբ 01, դաս 01, ծրագիր 01)

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/14	ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	562 400	562 400	562 400	562 400	562 400

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>>
պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011019792
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

<<Երևաննախագիծ>> ՓԲԸ
Ք.Երևան, Փ. Բուզանդի 1/3
<<Պրոմեթեյ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1660000215670100
ՀՎՀՀ 02500241

Տնօրեն՝

(ստորագրություն) Ս. Օհանյան

Կ.Տ.